ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ԹԻՎ 2015/2446 (ԵՄ) ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Միության մաքսային օրենսգրքի որոշ դրույթների վերաբերյալ մանրամասն կանոնների առնչությամբ Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի թիվ 952/2013 (ԵՄ) կանոնակարգում լրացումներ կատարող

Բաժին 2

Արտոնյալ ծագում

Հոդված 37

Սահմանումները

Սույն բաժնի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները՝

1) «շահառու երկիր» նշանակում է Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի թիվ 978/2012 (ԵՀ) կանոնակարգի II հավելվածում նշված՝ արտոնությունների ընդհանրացված համակարգի (ԱԸՀ) շահառու երկիր [(13)].

2) «արտադրություն» նշանակում է ցանկացած տիպի մշակում կամ վերամշակում, ներառյալ՝ հավաքումը.

3) «նյութ» նշանակում է արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող ցանկացած բաղադրատարր, հումք, բաղադրիչ կամ մաս եւ այլն.

4) «արտադրանք» նշանակում է արտադրվող արտադրանք, նույնիսկ եթե այն նախատեսված է մեկ այլ արտադրական գործողության մեջ ավելի ուշ օգտագործելու համար.

5) «ապրանքներ» նշանակում է եւ՛ նյութեր, եւ՛ արտադրանք.

6) «երկկողմ կումուլյացիա» նշանակում է այնպիսի համակարգ, որը թույլ է տալիս Միությունում ծագած արտադրանքը համարել որպես շահառու երկրի ծագում ունեցող նյութ, եթե այն հետագայում վերամշակվում կամ ներառվում է արտադրանքի մեջ այդ շահառու երկրում.

7) «կումուլյացիա Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի հետ» նշանակում է այնպիսի համակարգ, որը թույլ է տալիս Նորվեգիայում, Շվեյցարիայում կամ Թուրքիայում ծագած արտադրանքը համարել որպես շահառու երկրի ծագում ունեցող նյութ, եթե այն հետագայում վերամշակվում կամ ներառվում է արտադրանքի մեջ այդ շահառու երկրում եւ ներմուծվում է Միություն.

8) «տարածաշրջանային կումուլյացիա» նշանակում է այնպիսի համակարգ, որի շնորհիվ արտադրանքը, որը, սույն կանոնակարգի համաձայն, ծագում է այն երկրում, որը տարածաշրջանային խմբի անդամ է, համարվում է միեւնույն տարածաշրջանային խմբի մեկ այլ երկրի (կամ մեկ այլ տարածաշրջանային խմբի երկրի, որտեղ խմբերի միջեւ կումուլյացիան հնարավոր է) ծագում ունեցող նյութ, եթե այն հետագայում վերամշակվում կամ ներառվում է այդ երկրում արտադրված արտադրանքի մեջ.

9) «ընդլայնված կումուլյացիա» նշանակում է այնպիսի համակարգ, որը վավեր է շահառու երկրի կողմից ներկայացված պահանջով Հանձնաժողովի կողմից տրամադրման առկայության դեպքում, եւ որի շնորհիվ որոշակի նյութեր, որոնք ծագում են մի երկրում, որի հետ Միությունն ունի ազատ առեւտրի համաձայնագիր՝ գործող Սակագների եւ առեւտրի գլխավոր համաձայնագրի (ՍԱԳՀ) XXIV հոդվածին համապատասխան, համարվում են տվյալ շահառու երկրի ծագում ունեցող նյութեր, եթե դրանք հետագայում վերամշակվում կամ ներառվում են այդ երկրում արտադրված արտադրանքի մեջ.

10) «փոխադարձ փոխարինելի նյութեր» նշանակում է նույն տեսակի եւ առեւտրային որակի նյութեր, որոնք ունեն նույն տեխնիկական եւ ֆիզիկական բնութագրերը եւ չեն կարող տարբերակվել միմյանցից ավարտուն արտադրանքի մեջ ներառվելուց հետո.

11) «տարածաշրջանային խումբ» նշանակում է այն երկրների խումբը, որոնց միջեւ կիրառվում է տարածաշրջանային կումուլյացիան.

12) «մաքսային արժեք» նշանակում է 1994 թվականի «Սակագների եւ առեւտրի գլխավոր համաձայնագրի VII հոդվածի կիրառման մասին» համաձայնագրի (Մաքսային արժեքի սահմանման մասին ԱՀԿ համաձայնագիր) համաձայն որոշված արժեք.

13) «նյութերի արժեք» նշանակում է օգտագործված՝ ծագում չունեցող նյութերի մաքսային արժեքը ներմուծման պահին, կամ եթե այն հայտնի չէ եւ չի կարող պարզվել՝ արտադրանքի երկրում նյութերի համար վճարված առաջին հաստատուն գումարը. եթե պետք է սահմանել օգտագործված՝ ծագում ունեցող նյութերի արժեքը, այս կետը պետք է կիրառվի համապատասխան փոփոխություններով.

14) «գործարանային գին» նշանակում է գին, որը վճարվել է գործարանային արտադրանքի համար այն արտադրողին, ում գործարանում իրականացվել է վերջին մշակումը կամ վերամշակումը՝ պայմանով, որ գինը ներառում է բոլոր օգտագործված նյութերի արժեքը եւ մյուս բոլոր ծախսերը, որոնք առնչվում են դրա արտադրմանը՝ հանած ցանկացած ներքին հարկ, որը հետ է վճարվում կամ կարող է հետ վճարվել ստացված արտադրանքն արտահանվելու դեպքում:

Եթե փաստացի վճարված գինը չի արտացոլում արտադրանքի երկրում՝ արտադրանքի արտադրմանն առնչվող բոլոր կրած փաստացի ծախսերը, ապա գործարանային գին նշանակում է այդ բոլոր ծախսերի գումարը՝

հանած ցանկացած ներքին հարկ, որը հետ է վճարվում կամ կարող է հետ վճարվել ստացված արտադրանքն արտահանվելու դեպքում:

Եթե վերջին մշակումը կամ վերամշակումը ենթակապալի պայմանագրով վերապահվել է արտադրողին, ապա առաջին ենթապարբերության մեջ նշված «արտադրող» եզրույթը կարող է վերաբերել այն ձեռնարկությանը, որն աշխատանքի է ընդունել ենթակապալառուին.

15) «ծագում չունեցող նյութերի առավելագույն պարունակություն» նշանակում է ծագում չունեցող նյութերի այն առավելագույն պարունակությունը, որը թույլատրելի է, որպեսզի արտադրությունը որպես մշակում կամ վերամշակում բավարար համարվի արտադրանքին ծագում ունենալու կարգավիճակ տալու համար: Դա կարող է արտահայտված լինել որպես արտադրանքի գործարանային գնի տոկոսադրույք կամ օգտագործված այն նյութերի զուտ զանգվածի տոկոսադրույք, որոնք նշված են խմբերի, խմբի, ապրանքային դիրքի կամ ենթադիրքի կոնկրետ խմբում.

16) «զուտ զանգված» նշանակում է զուտ ապրանքների զանգվածը՝ առանց ցանկացած տիպի փաթեթավորման նյութերի եւ փաթեթավորման տարաների.

17) «խմբեր», «ապրանքային դիրքեր» եւ «ենթադիրքեր» նշանակում է անվանացանկում օգտագործված խմբեր, ապրանքային դիրքեր եւ ենթադիրքեր (քառանիշ կամ վեցանիշ ծածկագրեր), որից կազմված է Ներդաշնակեցված համակարգը՝ Մաքսային համագործակցության խորհրդի 2004 թվականի հունիսի 26-ի հանձնարարականի համաձայն կատարված փոփոխություններով.

18) «դասակարգված» վերաբերում է Ներդաշնակեցված համակարգի որոշակի ապրանքային դիրքում կամ ենթադիրքում նշված արտադրանքի կամ նյութի դասակարգմանը.

19) «խմբաքանակ» նշանակում է արտադրանք, որը՝

ա) կա՛մ միաժամանակ արտահանողից ուղարկվում է խմբաքանակն ստացողին,

բ) կա՛մ կարգավորվում է արտահանողից խմբաքանակն ստացողին դրա առաքումը կարգավորող մեկ տրանսպորտային փաստաթղթով, կա՛մ այդպիսի փաստաթղթի բացակայության դեպքում՝ մեկ հաշիվ-ապրանքագրով.

20) «արտահանող» նշանակում է Միություն կամ շահառու երկիր ապրանքներն արտահանող անձ, ով ի վիճակի է ապացուցել ապրանքների ծագումը, անկախ այն հանգամանքից՝ նա է արտադրողը, թե՝ ոչ, եւ անկախ այն հանգամանքից՝ հենց ինքն է իրականացնում արտահանման ձեւակերպումները, թե՝ ոչ.

21) «գրանցված արտահանող» նշանակում է՝

ա) արտահանող, որը հիմնադրվել է շահառու երկրում եւ գրանցվել է այդ շահառու երկրի իրավասու մարմինների կողմից՝ ծրագրում ներառված արտադրանքը Միություն կամ մեկ այլ շահառու երկիր, որի հետ տարածաշրջանային կումուլյացիան հնարավոր է, արտահանելու նպատակով, կամ

բ) արտահանող, որը հիմնադրվել է անդամ պետությունում եւ գրանցվել է այդ անդամ պետության մաքսային մարմինների կողմից՝ երկկողմ կումուլյացիային համապատասխան՝ շահառու երկրում որպես նյութ օգտագործվելու համար Միության ծագում ունեցող արտադրանքն արտահանելու նպատակով, կամ

գ) ապրանքներ բեռնառաքողը, որը հիմնադրվել է անդամ պետությունում եւ գրանցվել է այդ անդամ պետության մաքսային մարմինների կողմից՝ ծագման մասին փոխարինող

հայտարարություն կազմելու նպատակով՝ ծագում ունեցող արտադրանքը Միության մաքսային տարածքի շրջանակներում ամենուր առաքելու կամ, անհրաժեշտության դեպքում, Նորվեգիա, Շվեյցարիա կամ Թուրքիա առաքելու համար («գրանցված բեռնառաքող»).

22) «ծագման մասին հայտարարություն» նշանակում է արտահանողի կամ ապրանքներ բեռնառաքողի կողմից կազմված հայտարարություն, որտեղ նշվում է, որ այն արտադրանքը, որի վրա այն տարածվում է, համապատասխանում է ծրագրի՝ ծագման կանոններին:

Ենթաբաժին 2

Միության ԱԸՀ-ի շրջանակներում կիրառելի՝ ծագում ունեցող արտադրանք հասկացության սահմանումը

Հոդված 41

Ընդհանուր սկզբունքները

(Օրենսգրքի 64(3) հոդված)

Շահառու երկրի ծագում ունեցող արտադրանք է համարվում՝

ա) այդ երկրում 44-րդ հոդվածի իմաստով ամբողջությամբ ստացված արտադրանքը.

բ) այդ երկրում ստացված այն արտադրանքը, որը ներառում է նյութեր, որոնք ամբողջությամբ չեն ստացվել այդ երկրում՝ պայմանով, որ այդ նյութերը ենթարկվել են բավարար մշակման կամ վերամշակման՝ 45-րդ հոդվածի իմաստով:

Հոդված 42

Տարածքայնության սկզբունքը

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. Սույն ենթաբաժնի՝ ծագում ունեցող կարգավիճակ ձեռք բերելու համար սահմանված պայմանները պետք է կատարվեն շահագրգիռ շահառու երկրում:

2. «Շահառու երկիր» եզրույթը ծածկում է, սակայն չի կարող գերազանցել այդ երկրի տարածքային ծովի սահմանները՝ «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ–ի կոնվենցիայի իմաստով (Մոնտեգո Բեյի կոնվենցիա, 1982 թվականի դեկտեմբերի 10):

3. Եթե շահառու երկրից մեկ այլ երկիր արտահանված՝ ծագում ունեցող արտադրանքը վերադարձվում է, այն համարվում է ծագում չունեցող, եթե հնարավոր չէ իրավասու մարմնի պահանջները բավարարող ապացույցներ ներկայացնել այն մասին, որ կատարվում են հետեւյալ պայմանները՝

ա) վերադարձված արտադրանքը նույն արտահանված արտադրանքն է, եւ

բ) այն չի ենթարկվել ոչ մի գործողության՝ բացի այն գործողություններից, որոնք անհրաժեշտ են այդ արտադրանքն այդ երկրում գտնվելու ընթացքում կամ արտահանելու ժամանակ լավ վիճակում պահպանելու համար:

Հոդված 43

Ոչ մանիպուլյացիա

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. Միությունում ազատ շրջանառության համար բաց թողնելու նպատակով հայտարարագրված արտադրանքը նույն այն արտադրանքն է, որն արտահանվել է այն շահառու երկրից, որտեղ այն համարվում է ծագած: Այն չպետք է փոփոխվի, փոխակերպվի որեւէ կերպ կամ ենթարկվի

գործողությունների՝ բացի այդ արտադրանքը լավ վիճակում պահպանելու համար գործողություններից կամ մականշվածքների, պիտակների, կնիքների կամ որեւէ այլ փաստաթղթերի ավելացման կամ զետեղման գործողություններից՝ Միությունում կիրառելի՝ ներքին շուկայի հատուկ պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար՝ նախքան ազատ շրջանառության համար բաց թողնվելու նպատակով հայտարարագրվելը:

2. 53-րդ, 54-րդ, 55-րդ կամ 56-րդ հոդվածներով սահմանված կումուլյացիայի նպատակով շահառու երկիր ներմուծված արտադրանքը նույն այն արտադրանքն է, որն արտահանվել է այն երկրից, որը համարվում է այդ արտադրանքի ծագման երկիրը: Այն չպետք է փոփոխվի, փոխակերպվի որեւէ կերպ կամ ենթարկվի գործողությունների՝ բացի այդ արտադրանքը լավ վիճակում պահպանելու համար գործողություններից, ներկրման երկրում համապատասխան մաքսային ընթացակարգի համար հայտարարագրվելուց առաջ:

3. Արտադրանքի պահեստավորումը կարող է տեղի ունենալ՝ պայմանով, որ այն մնում է մաքսային հսկողության տակ՝ տարանցման երկրում կամ երկրներում:

4. Խմբաքանակների բաժանումը կարող է տեղի ունենալ, եթե դա իրականացվում է արտահանողի կողմից կամ նրա պատասխանատվությամբ՝ պայմանով, որ տվյալ ապրանքները մնում են մաքսային հսկողության տակ՝ տարանցման երկրում կամ երկրներում:

5. 1-ից 4-րդ պարբերությունները համարվում են պահպանված, եթե իհարկե մաքսային մարմինները պատճառ չունեն հակառակին հավատալու. այդ դեպքերում մաքսային մարմինները կարող են պահանջել հայտարարատուից համապատասխանության ապացույց տրամադրել, որը կարող է տրվել ցանկացած միջոցով, ներառյալ՝ պայմանագրային տրանսպորտային փաստաթղթերը, ինչպիսիք են ապրանքագրերը կամ փաստացի կամ կոնկրետ ապացույցը, որը հիմնված է փաթեթվածքների մակնշման կամ համարակալման վրա, կամ հենց ապրանքներին առնչվող ցանկացած ապացույց:

Հոդված 44

Ամբողջությամբ ստացված արտադրանք

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. Շահառու երկրում ամբողջությամբ ստացված արտադրանք է համարվում՝

ա) այդ երկրի հողից կամ ծովի հատակից հանված հանքանյութերը.

բ) այդ երկրում աճեցված կամ հավաքված բույսերը եւ բուսամթերքը.

գ) այդ երկրում ծնված եւ աճեցված կենդանի կենդանիները.

դ) այդ երկրում աճեցված կենդանի կենդանիներից ստացված արտադրանքը.

ե) այդ երկրում ծնված եւ աճեցված՝ սպանդի ենթարկված կենդանիներից ստացված արտադրանքը.

զ) այդ երկրում կատարված որսի կամ ձկնորսության միջոցով ստացված արտադրանքը.

է) ակվակուլտուրայի՝ այդ երկրում ծնված եւ աճեցված ձկների, խեցգետնակերպերի եւ կակղամորթների արտադրատեսակները.

ը) այդ երկրի նավերի կողմից ցանկացած տարածքային ծովից դուրս ծովից ստացված՝ ծովային ձկնորսության արտադրանքը եւ այլ արտադրանք.

թ) բացառապես «ը» կետում նշված արտադրանքից այդ երկրի գործարանային նավերի վրա պատրաստված արտադրանքը.

ժ) այդ երկրում հավաքված՝ օգտագործված պարագաները, որոնք պիտանի են միայն հումքի վերականգնման համար.

ժա) այդ երկրում կատարված արտադրական գործողությունների հետեւանքով առաջացած թափոնները եւ ջարդոնը.

ժբ) ցանկացած տարածքային ծովից դուրս գտնվող ծովային հատակից կամ ծովային հատակի ներքեւից հանած արտադրանքը, որտեղ այդ երկիրն ունի շահագործման բացառիկ իրավունքներ.

ժգ) բացառապես «ա»-«ժբ» կետերում նշված արտադրանքից այդ երկրում արտադրված ապրանքները:

2. Առաջին պարբերության «ը» եւ «թ» կետերում «այդ երկրի նավերը» եւ «այդ երկրի գործարանային նավերը» եզրույթները պետք է կիրառվեն միայն այն նավերի եւ գործարանային նավերի առնչությամբ, որոնք բավարարում են յուրաքանչյուր հետեւյալ պահանջ՝

ա) դրանք գրանցված են շահառու երկրում կամ անդամ պետությունում.

բ) դրանք նավարկում են շահառու երկրի կամ անդամ պետության դրոշի ներքո.

գ) դրանք համապատասխանում են հետեւյալ պայմաններից մեկին՝

i) դրանք առնվազն 50 %-ով պատկանում են շահառու երկրի կամ անդամ պետության քաղաքացիներին.

ii) դրանք պատկանում են այն ընկերություններին՝

- որոնց գլխամասային գրասենյակը եւ բիզնեսի հիմնական վայրը շահառու երկրում կամ անդամ պետությունում են, եւ

- որոնք առնվազն 50 %-ով պատկանում են շահառու երկրին կամ անդամ պետություններին կամ շահառու երկրի կամ անդամ պետությունների պետական կազմակերպություններին կամ քաղաքացիներին:

3. 2-րդ պարբերության պայմաններից յուրաքանչյուրը կարող է կատարվել անդամ պետություններում կամ տարբեր շահառու երկրներում այնքանով,

որքանով բոլոր ներգրավված շահառու երկրներն օգտվում են տարածաշրջանային կումուլյացիայից՝ հոդված 55(1)-ին եւ (5)-ին համապատասխան: Այս դեպքում արտադրանքը համարվում է այն շահառու երկրի ծագում ունեցող, որի դրոշի ներքո է նավարկում նավը կամ գործարանային նավը՝ 2-րդ պարբերության «բ» կետին համապատասխան:

Առաջին ենթապարբերությունը կիրառվում է միայն այն պայմանով, որ 55(2) հոդվածի «ա», «գ» եւ «դ» կետերում սահմանված պայմանները կատարվել են:

Հոդված 45

Բավարար չափով մշակված կամ վերամշակված արտադրանքը

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. Չհակասելով 47-րդ եւ 48-րդ հոդվածներին՝ 44-րդ հոդվածի իմաստով նշված արտադրանքը, որն ամբողջությամբ չի ստացվել տվյալ շահառու երկրում, պետք է համարվի այդ երկրի ծագում ունեցող՝ պայմանով, որ 22-03 հավելվածի՝ համապատասխան ապրանքների համար ցանկում սահմանված պայմանները կատարվում են:

2. Եթե արտադրանքը, որը, 1-ին պարբերության համաձայն, երկրում ձեռք է բերել ծագում ունենալու կարգավիճակ, հետագայում վերամշակվում է այդ երկրում եւ օգտագործվում որպես մեկ այլ արտադրանքի արտադրության նյութ, ծագում չունեցող նյութերը, որոնք հնարավոր է օգտագործվել են դրա արտադրության մեջ, հաշվի չեն առնվում:

Հոդված 46

Միջինը

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. 45(1) հոդվածի պահանջներին համապատասխանության որոշումը կատարվում է յուրաքանչյուր արտադրանքի համար:

Այնուամենայնիվ, եթե համապատասխան օրենքը հիմնված է ծագում չունեցող նյութերի առավելագույն պարունակության համապատասխանության վրա, ապա ծախսերի եւ արժույթի դրույքաչափերի տատանումները հաշվի առնելու համար ծագում չունեցող նյութերի արժեքը կարող է հաշվարկվել միջինի հիման վրա, ինչպես սահմանված է 2-րդ պարբերության մեջ:

2. 1-ին պարբերության երկրորդ ենթապարբերության մեջ նշված դեպքում արտադրանքի միջին գործարանային գինը եւ օգտագործված՝ ծագում չունեցող նյութերի միջին արժեքը համապատասխանաբար հաշվարկվում են նախորդ ֆինանսական տարվա ընթացքում կատարված՝ արտադրանքի ամբողջ վաճառքի համար գանձված գործարանային գների գումարի եւ արտահանման երկրում սահմանված՝ նախորդ ֆինանսական տարվա ընթացքում արտադրանքի արտադրության մեջ օգտագործված՝ ծագում չունեցող բոլոր նյութերի արժեքի գումարի հիման վրա, կամ եթե հասանելի չեն ամբողջական ֆինանսական տարվա թվերը՝ ավելի կարճ ժամանակահատվածի հիման վրա, որը երեք ամսից պակաս չպետք է լինի:

3. Այն արտադրողները, ովքեր նախընտրել են հաշվարկներ կատարել միջինի հիման վրա, հետեւողականորեն կիրառում են այս մեթոդը համապատասխան ֆինանսական տարվան հաջորդող տարվա ընթացքում, կամ անհրաժեշտության դեպքում՝ որպես հղում օգտագործված՝ ավելի կարճ ժամանակահատվածին հաջորդող տարվա ընթացքում: Նրանք կարող են դադարել կիրառել այս մեթոդը, եթե տվյալ ֆինանսական տարվա ընթացքում կամ երեք ամսից ոչ պակաս՝ ավելի կարճ ներկայացուցչական

ժամանակահատվածում, նրանք արձանագրում են, որ այս մեթոդի օգտագործումն արդարացնող՝ ծախսերի կամ արժույթի դրույքաչափերի տատանումները դադարել են:

4. 2-րդ պարբերության մեջ նշված միջինն օգտագործվում է համապատասխանաբար որպես գործարանային գին եւ ծագում չունեցող նյութերի արժեք՝ ծագում չունեցող նյութերի առավելագույն պարունակության հետ համապատասխանություն սահմանելու նպատակով:

Հոդված 47

Ոչ բավարար մշակումը կամ վերամշակումը

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. Չհակասելով 3-րդ պարբերությանը՝ հետեւյալ գործողությունները համարվում են ծագում ունեցող արտադրանքի կարգավիճակ շնորհելու համար ոչ բավարար մշակում կամ վերամշակում՝ անկախ նրանից՝ 45-րդ հոդվածի պահանջները բավարարված են, թե ոչ՝

ա) տրանսպորտային փոխադրման եւ պահպանման ընթացքում արտադրանքի լավ վիճակում պահպանվածությունն ապահովելու համար իրականացվող գործողությունները,

բ) փաթեթվածքների կազմատումը եւ հավաքումը.

գ) լվացումը, մաքրումը. փոշու, օքսիդի, յուղի, ներկի կամ այլ ծածկույթի հեռացումը.

դ) մանածագործվածքի (տեքստիլի) եւ մանածագործական իրերի արդուկումը կամ մամլումը.

ե) ներկման կամ փայլեցման պարզ գործողությունները.

զ) բրնձի թեփահանումը եւ մասնակի կամ ամբողջական աղալը. հացահատիկների եւ բրնձի ողորկումը եւ հղկումը.

է) շաքարը գունավորելու կամ համ տալու կամ կտոր շաքար ստանալու հետ կապված գործողությունները. բյուրեղային շաքարի մասնակի կամ ամբողջական աղալը.

ը) մրգերի, ընկույզների եւ բանջարեղենի կեղեւահանումը, կորիզների եւ կլեպի հեռացումը.

թ) սրումը, պարզ աղումը կամ պարզ կտրատումը.

ժ) մաղումը, ընտրումը, տեսակավորումը, դասակարգումը, աստիճանավորումը, համապատասխանեցումը (ներառյալ՝ արտադրատեսակների կոմպլեկտների կազմումը).

ժա) շշերի, բանկաների, սրվակների, պարկերի, արկղերի, տուփերի մեջ պարզ լցնելը, ստվարաթղթի կամ փաթեթվածքի վրա ամրակցելը եւ փաթեթավորման մյուս բոլոր պարզ գործողությունները.

ժբ) մականշվածքի, պիտակի, լոգոտիպի եւ նման այլ տարբերակիչ նշանների զետեղումը կամ տպագրումն արտադրանքի կամ դրա փաթեթվածքի վրա.

ժգ) միատեսակ կամ տարբեր տեսակի արտադրատեսակների պարզ խառնումը. շաքարի խառնումը ցանկացած նյութի հետ.

ժդ) ջրի պարզ ավելացումը կամ արտադրանքի նոսրացումը կամ ջրազրկումը կամ բնազրկումը (դենատուրացում).

ժե) արտադրատեսակների մասերի պարզ հավաքումը՝ ավարտուն արտադրատեսակ ստանալու նպատակով, կամ արտադրանքի կազմատումը մասերի.

ժզ) կենդանիների սպանդը.

ժէ) «ա»-ից մինչեւ «ժզ» կետերում նշված երկու կամ ավելի գործողությունների համակցությունը:

2. Գործողությունները 1-ին պարբերության նպատակներով համարվում են պարզ, եթե դրանց կատարման համար չեն պահանջվում ո՛չ հատուկ հմտություններ, ո՛չ էլ այդ գործողությունների համար հատուկ արտադրված կամ տեղադրված մեքենաներ, ապարատներ կամ գործիքներ:

3. Հաշվի են առնվում շահառու երկրում տվյալ արտադրանքի հետ կապված բոլոր կատարված գործողությունները, երբ որոշվում է՝ արդյոք մշակումը կամ վերամշակումը, որին ենթարկվել է արտադրանքը, համարվում է ոչ բավարար՝ 1-ին պարբերության իմաստով:

Հոդված 48

Թույլատրելի շեղում

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. Շեղում կատարելով 45-րդ հոդվածից եւ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ պարբերությունները՝ ծագում չունեցող նյութերը, որոնք, ըստ 22-03 հավելվածում սահմանված պայմանների ցանկի, չպետք է օգտագործվեն տվյալ արտադրանքի արտադրության մեջ, կարող են, այնուամենայնիվ, օգտագործվել՝ պայմանով, որ այդ արտադրանքի համար գնահատված դրանց ընդհանուր արժեքը կամ զուտ զանգվածը չի գերազանցում՝

ա) արտադրանքի զանգվածի 15 %-ն այն արտադրանքի համար, որը ներառված է Ներդաշնակեցված համակարգի 2-րդ եւ 4-ից մինչեւ 24-րդ ապրանքախմբերում՝ բացի 16-րդ ապրանքախմբի վերամշակված ձկնային արտադրանքից.

բ) արտադրանքի գործարանային գնի 15 %-ն այլ արտադրանքի համար՝ բացառությամբ Ներդաշնակեցված համակարգի 50-ից մինչեւ 63-րդ ապրանքախմբերում ներառված արտադրանքի, որի համար

կիրառվում են 22-03 հավելվածի I մասի 6-րդ եւ 7-րդ ծանոթագրություններում նշված թույլատրելի շեղումները:

2. 1-ին պարբերությամբ թույլ չի տրվում գերազանցել 22-03 հավելվածի ցանկով սահմանված կանոններում նշված՝ ծագում չունեցող նյութերի առավելագույն պարունակության տոկոսներից որեւէ մեկը:

3. 1-ին եւ 2-րդ պարբերությունները չեն կիրառվում շահառու երկրում ամբողջությամբ ստացված արտադրանքի առնչությամբ՝ 44-րդ հոդվածի իմաստով: Այնուամենայնիվ, չհակասելով 47-րդ եւ 49(2) հոդվածներին, այդ պարբերություններով սահմանված թույլատրելի շեղումը, այդուհանդերձ, կիրառվում է այն բոլոր նյութերի ամբողջության առնչությամբ, որոնք օգտագործվում են արտադրանքի արտադրության մեջ, եւ որոնց առնչությամբ այդ արտադրանքի համար 22-03 հավելվածի ցանկով սահմանված կանոնով պահանջվում է, որ այդպիսի նյութերը լինեն ամբողջությամբ ստացված:

Հոդված 49

Որակավորման միավորը

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. Սույն ենթաբաժնի դրույթների կիրառման համար որակավորման միավոր է կոնկրետ արտադրանքը, որը համարվում է որպես հիմնական միավոր, երբ, օգտագործելով Ներդաշնակեցված համակարգը, որոշվում է դասակարգումը:

2. Այն դեպքում, երբ խմբաքանակը բաղկացած է Ներդաշնակեցված համակարգի միեւնույն ապրանքային դիրքում դասակարգված մի շարք նույնանման արտադրատեսակներից, սույն ենթաբաժնի դրույթները կիրառելիս հաշվի է առնվում յուրաքանչյուր առանձին արտադրատեսակ:

3. Եթե Ներդաշնակեցված համակարգի 5-րդ ընդհանուր բացատրական կանոնին համապատասխան՝ դասակարգման նպատակներով փաթեթավորումը ներառված է արտադրանքի հետ միասին, այն պետք է ներառվի ծագումը որոշելու նպատակով:

Հոդված 50

Պարագաները, պահեստամասերը եւ գործիքները

(Օրենսգրքի 64(3) հոդված)

Սարքավորման, մեքենայի, ապարատի կամ փոխադրամիջոցի հետ ուղարկված պարագաները, պահեստամասերը եւ գործիքները, որոնք սովորական սարքավորման մաս են կազմում եւ ներառված են դրա գործարանային գնի մեջ, համարվում են մի ամբողջություն տվյալ սարքավորման, մեքենայի, ապարատի կամ փոխադրամիջոցի հետ միասին:

Հոդված 51

Հավաքածուները

(Օրենսգրքի 64(3) հոդված)

Ներդաշնակեցված համակարգի 3(բ) ընդհանուր բացատրական կանոնով սահմանված հավաքածուները համարվում են ծագում ունեցող, եթե արտադրանքի բոլոր բաղադրիչները ծագում ունեցող արտադրատեսակներ են:

Այն դեպքում, երբ հավաքածուն կազմված է ծագում ունեցող եւ ծագում չունեցող արտադրանքից, հավաքածուն որպես մեկ ամբողջություն, այնուամենայնիվ, համարվում է ծագում ունեցող՝ պայմանով, որ ծագում չունեցող արտադրանքի արժեքը չի գերազանցում հավաքածուի գործարանային արժեքի 15 տոկոսը:

Հոդված 52

Չեզոք տարրերը

(Օրենսգրքի 64(3) հոդված)

Որպեսզի որոշվի՝ արդյոք արտադրանքը ծագում ունեցող արտադրանք է, հաշվի չի առնվում դրա արտադրության մեջ օգտագործված հետեւյալի ծագումը՝

ա) էներգիա եւ վառելիք.

բ) գործարան եւ սարքավորումներ.

գ) մեքենաներ եւ գործիքներ.

դ) ցանկացած այլ ապրանք, որը արտադրանքի վերջնական կազմի մեջ չի մտնում եւ նախատեսված չէ մտնելու համար:

Ենթաբաժին 3

Միության ԱԸՀ-ի շրջանակներում կիրառելի նյութերի պաշարների կումուլյացիայի եւ կառավարման կանոնները

Հոդված 53

Երկկողմ կումուլյացիա

(Օրենսգրքի 64(3) հոդված)

Երկկողմ կումուլյացիան թույլ է տալիս Միության ծագում ունեցող արտադրանքը համարել որպես շահառու երկրում ծագող նյութեր այն դեպքում, երբ դրանք ներառվում են այդ երկրում արտադրված արտադրանքի մեջ՝ պայմանով, որ այդ երկրում իրականացված մշակումը կամ վերամշակումը 47(1) հոդվածում նկարագրված գործողությունների շրջանակից դուրս է:

41-ից մինչեւ 52-րդ հոդվածները եւ ծագման ապացույցների հետագա ստուգմանն առնչվող դրույթները համապատասխան փոփոխություններով կիրառվում են Միությունից դեպի շահառու երկիր արտահանումների նկատմամբ՝ երկկողմ կումուլյացիայի նպատակներով:

Հոդված 54

Կումուլյացիա Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի հետ

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի հետ կումուլյացիան թույլ է տալիս այդ երկրների ծագում ունեցող արտադրանքը համարել շահառու երկրի ծագում ունեցող նյութ՝ պայմանով, որ այդ երկրներում իրականացված մշակումը կամ վերամշակումը 47(1) հոդվածում նկարագրված գործողությունների շրջանակից դուրս է:

2. Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի հետ կումուլյացիան չի կիրառվում Ներդաշնակեցված համակարգի 1-ից մինչեւ 24-րդ ապրանքախմբերում ներառված արտադրանքի նկատմամբ:

Հոդված 55

Տարածաշրջանային կումուլյացիա

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. Տարածաշրջանային կումուլյացիան կիրառվում է հետեւյալ չորս առանձին տարածաշրջանային խմբերի առնչությամբ՝

ա) I խումբ՝ Բրունեյ, Կամբոջա, Ինդոնեզիա, Լաոս, Մալայզիա, Մյանմար/Բուրմա, Ֆիլիպիններ, Թայլանդ, Վիետնամ.

բ) II խումբ՝ Բոլիվիա, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Էկվադոր, Էլ Սալվադոր, Գուատեմալա, Հոնդուրաս, Նիկարագուա, Պանամա, Պերու, Վենեսուելա.

գ) III խումբ՝ Բանգլադեշ, Բհութան, Հնդկաստան, Մալդիվներ, Նեպալ, Պակիստան, Շրի Լանկա.

դ) IV խումբ՝ Արգենտինա, Բրազիլիա, Պարագվայ եւ Ուրուգվայ:

2. Միեւնույն խմբի երկրների միջեւ տարածաշրջանային կումուլյացիան կիրառվում է միայն, եթե բավարարվում են հետեւյալ պայմանները՝

ա) արտադրանքը Միություն արտահանելու պահի դրությամբ կումուլյացիայի մեջ ներգրավված երկրներն այն շահառու երկրներն են, որոնց համար արտոնությունների մեխանիզմները ժամանակավորապես չեն չեղարկվել՝ թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգի համաձայն.

բ) տարածաշրջանային խմբի երկրների միջեւ տարածաշրջանային կումուլյացիայի նպատակով կիրառվում են 2-րդ ենթաբաժնում սահմանված կանոնները.

գ) տարածաշրջանային խմբի երկրները պարտավորվել են՝

i) պահպանել կամ ապահովել համապատասխանությունը սույն ենթաբաժնին, եւ

ii) տրամադրել վարչական համագործակցություն, որն անհրաժեշտ է սույն ենթաբաժնի ճիշտ կիրարկումն ապահովելու համար եւ՛ Միության առնչությամբ, եւ՛ միմյանց միջեւ.

դ) Հանձնաժողովը ծանուցվել է «գ» կետում նշված պարտավորությունների մասին տվյալ տարածաշրջանային խմբի քարտուղարության կողմից կամ մեկ այլ իրավասու համատեղ մարմնի կողմից, որը ներկայացնում է տվյալ խմբի բոլոր անդամներին:

«Բ» կետի նպատակներով, եթե 22-03 հավելվածի II մասում սահմանված որակավորող գործողությունը նույնը չէ բոլոր այն երկրների համար, որոնք

ներգրավված են կումուլյացիայի մեջ, տարածաշրջանային կումուլյացիայի նպատակով տարածաշրջանային խմբի մի երկրից մեկ այլ երկիր արտահանվող արտադրանքի ծագումը պետք է որոշվի այն կանոնի հիման վրա, որը կկիրառվեր, եթե արտադրանքն արտահանվեր Միություն:

Եթե տարածաշրջանային խմբի երկրներն արդեն բավարարել են առաջին ենթապարբերության «գ» եւ «դ» կետերը մինչեւ 2011 թվականի հունվարի 1-ը, ապա նոր պարտավորություն ստանձնել չի պահանջվում:

3. 22-04 հավելվածում նշված նյութերի վրա 2-րդ պարբերությամբ նախատեսված տարածաշրջանային կումուլյացիան չի տարածվում այն դեպքում, երբ՝

ա) Միությունում կիրառելի սակագնային արտոնությունը միեւնույնը չէ կումուլյացիայի մեջ ներգրավված բոլոր երկրների համար.

բ) նշված նյութերի համար կումուլյացիայի միջոցով ավելի շատ են օգուտները սակագնային ռեժիմի դեպքում, քան անմիջապես Միություն արտահանելու դեպքում:

4. Միեւնույն տարածաշրջանային խմբի շահառու երկրների միջեւ տարածաշրջանային կումուլյացիան կիրառվում է միայն այն պայմանով, որ այն շահառու երկրում իրականացված մշակումը կամ վերամշակումը, որտեղ նյութերը հետագայում վերամշակվում կամ ներառվում են արտադրանքի մեջ, 47(1) հոդվածում նկարագրված գործողությունների շրջանակից դուրս է, իսկ մանածագործական արտադրանքի դեպքում՝ նաեւ 22-05 հավելվածով սահմանված գործողությունների շրջանակից դուրս:

Եթե առաջին ենթապարբերությունով սահմանված պայմանը չի կատարվում, եւ նյութերը ենթակա են 47(1) հոդվածի «բ»-ից մինչեւ «ժէ» կետերում նկարագրված մեկ կամ ավելի գործողությունների, ապա այն երկիրը, որը պետք է հայտարարվի որպես ծագման երկիր՝ արտադրանքը Միություն արտահանելու նպատակներով տրված կամ կազմված ծագման ապացույցի առնչությամբ,

պետք է լինի տարածաշրջանային երկրի այն երկիրը, որն ապահովում է տարածաշրջանային խմբի երկրներում ծագող՝ օգտագործված նյութերի արժեքի ամենաբարձր մասնաբաժինը:

Եթե արտադրանքն արտահանվում է առանց հետագա մշակման կամ վերամշակման, կամ այն միայն ենթարկվել է 47(1)(ա) հոդվածում նկարագրված գործողությունների, ապա այն երկիրը, որը պետք է հայտարարվի որպես ծագման երկիր՝ արտադրանքը Միություն արտահանելու նպատակներով տրված կամ կազմված ծագման ապացույցի առնչությամբ, պետք է լինի այն շահառու երկիրը, որն ապահովում է տարածաշրջանային խմբի երկրներում ծագող՝ օգտագործված նյութերի արժեքի ամենաբարձր մասնաբաժինը:

5. I խմբի կամ III խմբի շահառու երկրի իշխանությունների պահանջով այդ խմբերի երկրների միջեւ տարա ծաշրջանային կումուլյացիան կարող է տրամադրվել Հանձնաժողովի կողմից՝ պայմանով, որ Հանձնաժողովը համոզվել է, որ հետեւյալ պայմաններից յուրաքանչյուրը բավարարվում է՝

ա) 2-րդ պարբերության «ա» եւ «բ» կետերում նշված պայմանները բավարարված են, եւ

բ) այդպիսի տարածաշրջանային կումուլյացիայի մեջ ներգրավման ենթակա երկրները պարտավորվել են եւ համատեղ ծանուցել են Հանձնաժողովին իրենց հետեւյալ պարտավորության մասին՝

i) պահպանել կամ ապահովել համապատասխանությունը սույն ենթաբաժնին, 2-րդ ենթաբաժնին եւ մնացած բոլոր դրույթներին, որոնք վերաբերում են ծագման կանոնների կիրարկմանը, եւ

ii) տրամադրել վարչական համագործակցություն, որն անհրաժեշտ է սույն ենթաբաժնի եւ 2-րդ ենթաբաժնի ճիշտ կիրարկումն ապահովելու համար եւ՛ Միության առնչությամբ, եւ՛ միմյանց միջեւ:

Առաջին ենթապարբերության մեջ նշված պահանջը պետք է հիմնավորվի ապացույցով, որ այդ ենթապարբերության մեջ սահմանված պայմանները

բավարարվում են: Այն ուղղվում է Հանձնաժողովին: Հանձնաժողովը պահանջի վերաբերյալ որոշում կկայացնի՝ հաշվի առնելով կումուլյացիային վերաբերող բոլոր այն տարրերը, որոնք համարվում են էական, ներառյալ՝ նյութերը, որոնք պետք է կումուլացվեն:

6. Տրամադրելու դեպքում I խմբի կամ III խմբի շահառու երկրների միջեւ տարածաշրջանային կումուլյացիան թույլ է տալիս մի տարածաշրջանային խմբի երկրում ծագած նյութերը համարել որպես մյուս տարածաշրջանային խմբի երկրի ծագում ունեցող նյութեր այն դեպքում, երբ դրանք ներառվում են այդ երկրում ստացված արտադրանքի մեջ՝ պայմանով, որ վերջին շահառու երկրում իրականացված մշակումը կամ վերամշակումը 47(1) հոդվածում նկարագրված գործողությունների շրջանակից դուրս է, իսկ մանածագործական արտադրանքի դեպքում՝ նաեւ 22-05 հավելվածով սահմանված գործողությունների շրջանակից դուրս:

Եթե առաջին ենթապարբերությամբ սահմանված պայմանը չի կատարվում եւ նյութերը ենթակա են 47(1) հոդվածի «բ»-ից մինչեւ «ժէ» կետերում նկարագրված մեկ կամ ավելի գործողությունների, ապա այն երկիրը, որը պետք է հայտարարվի որպես ծագման երկիր՝ արտադրանքը Միություն արտահանելու նպատակներով ծագման ապացույցի առնչությամբ, պետք է լինի կումուլյացիային մասնակցող այն երկիրը, որը հաշվարկում է կումուլյացիային մասնակցող երկրների ծագում ունեցող՝ օգտագործված նյութերի արժեքի ամենաբարձր մասնաբաժինը:

Եթե արտադրանքն արտահանվում է առանց հետագա մշակման կամ վերամշակման, կամ այն ենթարկվել է միայն 47(1)(ա) հոդվածում նկարագրված գործողություններին, ապա այն երկիրը, որը պետք է հայտարարվի որպես ծագման երկիր՝ արտադրանքը Միություն արտահանելու նպատակներով տրված կամ կազմված ծագման ապացույցի առնչությամբ, պետք է լինի այն շահառու երկիրը, որը ներկայանում է որպես այն շահառու երկիր, որտեղ տրվել կամ կազմվել է ծագման ապացույցը, եւ որտեղ արտադրանքն արտադրվել է:

7. Հանձնաժողովը Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում (Գ շարք) կիրապարակի I խմբի եւ III խմբի երկրների միջեւ 5-րդ պարբերությամբ նախատեսված կումուլյացիան ուժի մեջ մտնելու ամսաթիվը, այդ կումուլյացիայի մեջ ներգրավված երկրները եւ համապատասխան դեպքերում՝ նյութերի ցանկը, որոնց առնչությամբ կումուլյացիան կիրառվում է:

8. 41-ից մինչեւ 52-րդ հոդվածները եւ ծագման ապացույցների տրմանը կամ կազմմանը վերաբերող դրույթները եւ ծագման ապացույցների հետագա ստուգմանն առնչվող դրույթները համապատասխան փոփոխություններով կիրառվում են մի շահառու երկրից դեպի մեկ այլ շահառու երկիր արտահանումների նկատմամբ՝ տարածաշրջանային կումուլյացիայի նպատակներով:

Հոդված 56

Ընդլայնված կումուլյացիա

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. Ցանկացած շահառու երկրի իշխանությունների պահանջով ընդլայնված կումուլյացիան շահառու երկրի եւ այն երկրի միջեւ, որի հետ Միությունն ունի ազատ առեւտրի պայմանագիր՝ գործող Սակագների եւ առեւտրի ընդհանուր համաձայնագրի (ՍԱԸՀ) XXIV հոդվածի համաձայն, կարող է տրամադրվել Հանձնաժողովի կողմից՝ պայմանով, որ հետեւյալ պայմաններից յուրաքանչյուրը բավարարվում է՝

ա) կումուլյացիայի մեջ ներգրավված երկրները պարտավորվել են պահպանել կամ ապահովել համապատասխանությունը սույն ենթաբաժնին, 2-րդ ենթաբաժնին եւ ծագման կանոնների կիրարկմանն առնչվող բոլոր մյուս դրույթներին եւ տրամադրել վարչական համագործակցություն, որն անհրաժեշտ է սույն ենթաբաժնի եւ 2-րդ ենթաբաժնի ճշգրիտ կիրարկումն

ապահովելու համար եւ՛ Միության առնչությամբ, եւ՛ միմյանց միջեւ.

բ) Հանձնաժողովը ծանուցվել է «ա» կետում նշված պարտավորության մասին տվյալ շահառու երկրի կողմից:

Առաջին ենթապարբերության մեջ նշված պահանջը պետք է պարունակի կումուլյացիային առնչվող նյութերի ցանկը եւ պետք է հիմնավորվի ապացույցով, որ առաջին ենթապարբերության «ա» եւ «բ» կետերով սահմանված պայմանները բավարարված են: Այն ուղղվում է Հանձնաժողովին: Եթե տվյալ նյութերը փոփոխվում են, մեկ այլ պահանջ է ներկայացվում:

Ընդլայնված կումուլյացիան չի տարածվում Ներդաշնակեցված համակարգի 1-ից մինչեւ 24-րդ ապրանքախմբերում ներառված նյութերի վրա:

2. 1-ին պարբերության մեջ նշված ընդլայնված կումուլյացիայի դեպքում, օգտագործված նյութերի ծագումը եւ ծագման՝ կիրառելի փաստաթղթային ապացույցը որոշվում են համապատասխան ազատ առեւտրի համաձայնագրով սահմանված կանոնների համաձայն: Միություն արտահանելու ենթակա արտադրանքի ծագումը որոշվում է 2-րդ ենթաբաժնով սահմանված՝ ծագման կանոններին համապատասխան:

Ստացված արտադրանքին ծագում ունենալու կարգավիճակ տալու համար անհրաժեշտ չէ, որ նյութերը, որոնք այն երկրի ծագումն ունեն, որի հետ Միությունն ունի ազատ առեւտրի համաձայնագիր, եւ որոնք օգտագործվել են շահառու երկրում այն արտադրանքի արտադրության մեջ, որը պետք է արտահանվի Միություն, ենթարկված լինեն բավարար մշակման կամ վերամշակման՝ պայմանով, որ տվյալ շահառու երկրում իրականացված մշակումը կամ վերամշակումը 47(1) հոդվածում նկարագրված գործողությունների շրջանակից դուրս է:

3. Հանձնաժողովը Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում

(Գ շարք) կիրապարակի ընդլայնված կումուլյացիան ուժի մեջ մտնելու ամսաթիվը, այդ կումուլյացիայում ներգրավված երկրները եւ այն նյութերի ցանկը, որոնց առնչությամբ կիրառվում է կումուլյացիան:

Հոդված 57

Երկկողմ կումուլյացիայի կամ Նորվեգիայի, Շվեյցարիայի եւ Թուրքիայի հետ կումուլյացիայի կիրառումը՝ տարածաշրջանային կումուլյացիայի հետ համակցությամբ

(Օրենսգրքի 64(3) հոդված)

Եթե երկկողմ կումուլյացիան կամ Նորվեգիայի, Շվեյցարիայի եւ Թուրքիայի հետ կումուլյացիան օգտագործվում է տարածաշրջանային կումուլյացիայի հետ համակցությամբ, ապա ստացված արտադրանքը ձեռք է բերում տվյալ տարածաշրջանային խմբի երկրներից մեկի ծագում, որը որոշվում է 55(4) հոդվածի առաջին եւ երկրորդ ենթապարբերությունների համաձայն կամ համապատասխան դեպքերում՝ 55(6) հոդվածի առաջին եւ երկրորդ ենթապարբերությունների համաձայն:

Հոդված 58

Միության արտահանողների նյութերի պաշարների հաշվապահական սեգրեգացիա

(Օրենսգրքի 64(3) հոդված)

1. Եթե ծագում ունեցող եւ ծագում չունեցող փոխադարձ փոխարինելի նյութերն օգտագործվում են արտադրանքի մշակման կամ վերամշակման մեջ, ապա անդամ պետությունների մաքսային մարմինները Միության մաքսային տարածքում հիմնադրված տնտեսական օպերատորների գրավոր պահանջով կարող են թույլատրել Միությունում նյութերի կառավարումը՝ օգտագործելով

հաշվապահական սեգրեգացիայի մեթոդը՝ երկկողմ կումուլյացիայի շրջանակներում շահառու երկիր հետագա արտահանման նպատակով՝ առանց նյութերն առանձին պահեստներում պահելու:

2. Անդամ պետությունների մաքսային մարմինները կարող են, 1-ին պարբերության մեջ նշված թույլտվության տրամադրման հետ կապված, սահմանել ցանկացած պայման, որն իրենք անհրաժեշտ են համարում:

Թույլտվությունը տրամադրվում է միայն այն դեպքում, երբ 1-ին պարբերության մեջ նշված մեթոդի օգտագործումը կարող է ապահովել, որ ցանկացած պահի ստացված այն արտադրանքի քանակը, որը կարող է համարվել որպես «Միության ծագում ունեցող», համընկնում է այն թվի հետ, որը որ կստացվեր պահեստների ֆիզիկական սեգրեգացիայի մեթոդն օգտագործելիս:

Թույլտվություն ստանալու դեպքում մեթոդը կիրառվում է, եւ դրա կիրառումն արձանագրվում է Միությունում կիրառելի ընդհանուր հաշվապահական հաշվառման սկզբունքների հիման վրա:

3. 1-ին պարբերության մեջ նշված մեթոդի շահառուն կազմում է կամ մինչեւ գրանցված արտահանողների համակարգի կիրառումը դիմում է այն արտադրանքի քանակի առնչությամբ ծագման ապացույցների համար, որը կարող է համարվել որպես Միության ծագում ունեցող: Անդամ պետությունների մաքսային մարմինների պահանջով շահառուն հայտարարություն է ներկայացնում, թե ինչպես են կառավարվել քանակները:

4. Անդամ պետությունների մաքսային մարմինները 1-ին պարբերության մեջ նշված թույլտվության օգտագործման մշտադիտարկում (մոնիթորինգ) են իրականացնում:

Նրանք կարող են չեղարկել թույլտվությունը հետեւյալ դեպքերում՝

ա) թույլտվություն ունեցող անձը ոչ պատշաճ կերպով է օգտվում թույլտվությունից, կամ

բ) թույլտվություն ունեցող անձը չի կատարում սույն ենթաբաժնում, 2-րդ ենթաբաժնում եւ ծագման կանոնների կիրարկմանը վերաբերող բոլոր մնացած դրույթներում սահմանված այլ պայմաններից որեւէ մեկը:

Հավելված 22-03

Ներածական ծանոթագրություններ եւ մշակման կամ վերամշակման այն գործողությունների ցանկը, որոնց միջոցով տրվում է ծագում ունենալու կարգավիճակ

ՄԱՍ 1

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություն 1: Ընդհանուր ներածություն

1.1. Սույն հավելվածը սահմանում է կանոններ բոլոր արտադրատեսակների համար, բայց այն փաստը, որ արտադրանքը ներառված է դրանում, չի նշանակում, որ այն անպայմանորեն ներառված է արտոնությունների ընդհանրացված համակարգում (ԱԸՀ): ԱԸՀ-ում ներառված արտադրատեսակների ցանկը, ԱԸՀ-ի արտոնությունների շրջանակը եւ որոշակի շահառու երկրների առնչությամբ կիրառելի բացառումները սահմանվում են թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգում (2014 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար):

1.2. Սույն հավելվածը սահմանում է պայմաններ՝ 45-րդ հոդվածին համապատասխան, որոնց համաձայն՝ արտադրանքը համարվում է տվյալ շահառու երկրի ծագում ունեցող: Կան չորս տարբեր տիպի կանոններ, որոնք տարբերվում են ըստ արտադրանքի՝

ա) մշակման կամ վերամշակման արդյունքում ծագում չունեցող նյութերի առավելագույն պարունակությունը չի գերազանցվում.

բ) մշակման կամ վերամշակման արդյունքում Ներդաշնակեցված համակարգի քառանիշ ապրանքային դիրքը կամ արտադրված արտադրանքի՝ Ներդաշնակեցված համակարգի վեցանիշ ենթադիրքը տարբերվում է օգտագործված նյութերի՝ համապատասխանաբար Ներդաշնակեցված համակարգի քառանիշ ապրանքային դիրքից կամ Ներդաշնակեցված համակարգի վեցանիշ ենթադիրքից.

գ) իրականացվում է մշակման կամ վերամշակման հատուկ գործողություն.

դ) մշակումը կամ վերամշակումն իրականացվում է ամբողջությամբ ստացված կոնկրետ նյութերի առնչությամբ:

Ծանոթագրություն 2: Ցանկի կառուցվածքը

2.1. 1-ին եւ 2-րդ սյունակները նկարագրում են ստացված արտադրանքը: 1-ին սյունակում նշվում է Ներդաշնակեցված համակարգում անհրաժեշտության դեպքում օգտագործված՝ ապրանքախմբի համարը, քառանիշ ապրանքային դիրքի կամ վեցանիշ ենթադիրքի համարը: 2-րդ սյունակում նշվում է այն ապրանքների նկարագրությունը, որոնք օգտագործվում են այդ համակարգում տվյալ ապրանքային դիրքի կամ ապրանքախմբի համար: 1-ին եւ 2-րդ սյունակի՝ 2.4 ծանոթագրության ենթակա

յուրաքանչյուր նշագրման համար 3-րդ սյունակում սահմանվում է մեկ կամ ավելի կանոններ («որակավորող գործողություններ»): Սույն որակավորող գործողությունները վերաբերում են միայն ծագում չունեցող նյութերին: Եթե որոշ դեպքերում 1-ին սյունակի նշագրմանը նախորդում է «ex» բառը, դա նշանակում է, որ 3-րդ սյունակի կանոնը կիրառվում է միայն այդ ապրանքային դիրքի մի մասի նկատմամբ, ինչպես նկարագրվում է 2-րդ սյունակում:

2.2. Եթե 1–ին սյունակում խմբավորված են Ներդաշնակեցված համակարգի մի քանի ապրանքային դիրքեր կամ ենթադիրքեր, կամ երբ ներկայացված է ապրանքախմբի համարը, եւ հետեւաբար 2-րդ սյունակում արտադրատեսակների նկարագրությունը ներկայացված է ընդհանրական կերպով, ապա 3–րդ սյունակում դրանց կից ներկայացված կանոնը կիրառվում է այն բոլոր արտադրատեսակների նկատմամբ, որոնք Ներդաշնակեցված համակարգում դասակարգված են այդ ապրանքախմբի ապրանքային դիրքերի կամ 1–ին սյունակում խմբավորված ապրանքային դիրքերից կամ ենթադիրքերից ցանկացածի ներքո:

2.3. Եթե ցանկում տեղ են գտել մեկ ապրանքային դիրքի ներքո դասակարգված տարբեր արտադրատեսակների նկատմամբ կիրառվող տարբեր կանոններ, ապա յուրաքանչյուր պարբերույթ ներառում է 3–րդ սյունակում դրան կից ներկայացվող կանոնով կարգավորվող ապրանքային դիրքի այդ մասի նկարագրությունը:

2.4. Եթե երկու այլընտրանքային կանոններ են սահմանված 3-րդ սյունակում, որոնք առանձնացված են «կամ» բառով, ապա արտահանողն ինքն է ընտրում՝ որ մեկն օգտագործել:

2.5. Մեծամասամբ 3-րդ սյունակում սահմանված կանոնը (կանոնները) կիրառվում է (են) թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգի II հավելվածում

նշված՝ բոլոր շահառու երկրների առնչությամբ: Այնուամենայնիվ, թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգի IV հավելվածում նշված՝ առավել թույլ զարգացած երկրների համար հատուկ ռեժիմի («ԱԹԶԵ-ի շահառու երկրներ») շահառու երկրների ծագում ունեցող որոշ արտադրատեսակների համար կիրառվում է ավելի մեղմ կանոն: Այս դեպքերում 3-րդ սյունակը բաժանվում է երկու՝ «ա» եւ «բ» ենթասյունակների, որտեղ «ա» ենթասյունակում նշվում է ԱԹԶԵ-ի շահառու երկրների առնչությամբ կիրառելի կանոնը, իսկ «բ» ենթասյունակում նշվում է մյուս բոլոր շահառու երկրների առնչությամբ, ինչպես նաեւ Եվրոպական միությունից դեպի շահառու երկիր արտահանումների առնչությամբ կիրառելի կանոնը՝ երկկողմ կումուլյացիայի նպատակներով:

Ծանոթագրություն 3; Օրինակներ, թե ինչպես կիրառել կանոնները

3.1. 45(2) հոդվածը, որը վերաբերում է ծագում ունենալու կարգավիճակ ձեռք բերած այն արտադրատեսակներին, որոնք օգտագործվում են այլ արտադրատեսակների արտադրության մեջ, պետք է կիրառվի՝ անկախ այն հանգամանքից՝ այդ կարգավիճակը ձեռք է բերվել այն գործարանում, որտեղ օգտագործվում են այդ արտադրատեսակները, թե շահառու երկրում կամ Եվրոպական միությունում գտնվող մեկ այլ գործարանում:

3.2. 47-րդ հոդվածի համաձայն՝ իրականացված մշակումը կամ վերամշակումը պետք է գերազանցի այդ հոդվածում նշված գործողությունների ցանկը: Հակառակ դեպքում, ապրանքները չեն որակավորվում սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման համար, նույնիսկ եթե ստորեւ ներկայացված պայմանները բավարարվում են:

Առաջին ենթապարբերության մեջ նշված դրույթի համաձայն՝ ցանկում ներառված կանոնները ներկայացնում են պահանջվող մշակման կամ

վերամշակման նվազագույն չափը, իսկ ավելի շատ մշակման կամ վերամշակման արդյունքում նույնպես տրվում է ծագում ունենալու կարգավիճակ, եւ հակառակը, ավելի քիչ մշակման կամ վերամշակման արդյունքում չի կարող տրվել ծագում ունենալու կարգավիճակ: Այսպիսով, եթե կանոնով նախատեսված է, որ ծագում չունեցող նյութը կարող է արտադրության որոշակի մակարդակում օգտագործվել, ապա այդպիսի նյութի օգտագործումն արտադրության ավելի վաղ փուլում թույլատրվում է, իսկ դրա օգտագործումն արտադրության ավելի ուշ փուլում չի թույլատրվում:

3.3. Չհակասելով 3.2 ծանոթագրությանը, եթե կանոնի մեջ օգտագործված է «արտադրությունը՝ ցանկացած ապրանքային դիրքի նյութերից» արտահայտությունը, ապա կարող են օգտագործվել ցանկացած ապրանքային դիրքի (դիրքերի) նյութեր (նույնիսկ այն նյութերը, որոնք դասվում են արտադրանքի ապրանքային միեւնույն դիրքի կամ նկարագրության ներքո), որոնք, սակայն, ենթակա են կանոնում ներառված ցանկացած հատուկ սահմանափակման:

Այնուամենայնիվ, «արտադրությունը՝ ցանկացած ապրանքային դիրքի նյութերից, այդ թվում՝ ապրանքային դիրքի այլ նյութերից... » կամ «արտադրությունը՝ ցանկացած ապրանքային դիրքի նյութերից, այդ թվում՝ արտադրանքի միեւնույն ապրանքային դիրքին դասվող այլ նյութերից» արտահայտությունը նշանակում է, որ կարող են օգտագործվել ցանկացած ապրանքային դիրքի (դիրքերի) նյութեր՝ բացառությամբ արտադրանքի միեւնույն նկարագրությունն ունեցող նյութերի, ինչպես նշված է ցանկի 2–րդ սյունյակում:

3.4. Այն դեպքում, երբ ցանկում զետեղված կանոնով սահմանվում է, որ արտադրանքը կարող է արտադրվել մեկից ավելի նյութերից, ապա դա նշանակում է, որ կարող են օգտագործվել մեկ կամ ավելի նյութեր: Չի պահանջվում օգտագործել բոլորը:

3.5. Եթե ցանկում ներառված կանոնով սահմանված է, որ արտադրանքը պետք է արտադրվի որոշակի նյութից, ապա այդ կանոնը չի խոչընդոտում նաեւ այլ նյութերի օգտագործումը, որոնք, իրենց ներհատուկ բնույթով պայմանավորված, չեն կարող բավարարել այս պայմանը:

Ծանոթագրություն 4: Որոշակի գյուղատնտեսական ապրանքներին առնչվող ընդհանուր դրույթները

4.1. 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ ապրանքախմբերում եւ 2401 ապրանքային դիրքում ներառված այն գյուղատնտեսական ապրանքները, որոնք աճեցվում կամ հավաքվում են շահառու երկրի տարածքում, համարվում են այդ երկրի տարածքի ծագում ունեցող ապրանքներ, նույնիսկ եթե դրանք աճեցվում են մեկ այլ երկրից ներմուծված սերմերից, սոխուկներից, պատվաստակալներից, տնկաշիվերից, պատվաստումներից, ընձյուղներից, կոկոններից կամ բույսերի մյուս կենդանի մասերից:

4.2. Այն դեպքերում, երբ ծագում չունեցող շաքարի պարունակությունը տվյալ արտադրանքի մեջ ենթակա է սահմանափակումների, 1701 ապրանքային դիրքի (բուսաշաքարը) եւ 1702 ապրանքային դիրքի (օր.՝ պտղաշաքարը, խաղողաշաքարը, կաթնաշաքարը, ածիկաշաքարը, իզոգլյուկոզան կամ ինվերտ շաքարը) այն շաքարի զանգվածը, որն օգտագործվում է վերջնական արտադրանքի արտադրության մեջ, ինչպես նաեւ վերջնական արտադրանքի մեջ ներառված՝ ծագում չունեցող արտադրանքի արտադրության մեջ, հաշվի է առնվում այդպիսի սահմանափակումների հաշվարկման համար:

Ծանոթագրություն 5: Որոշակի մանածագործական արտադրատեսակների առնչությամբ օգտագործված եզրութաբանությունը

5.1. «Բնական մանրաթելեր» եզրույթը ցանկում օգտագործվում է՝ նշելու համար արհեստական կամ սինթետիկ մանրաթելերից տարբեր այլ մանրաթելեր: Այն նախատեսված է մինչեւ մանման փուլը կիրառվելու համար եւ վերաբերում է նաեւ դրա թափոնին, եւ եթե այլ բան նախատեսված չէ, ներառում է սանդերքագզված, սանրագզված կամ այլ կերպ վերամշակված, բայց ոչ մանված մանրաթելեր:

5.2. «Բնական մանրաթելեր» եզրույթը ներառում է 0503 ապրանքային դիրքի ձիու մազը, 5002 եւ 5003 ապրանքային դիրքերի մետաքսը, ինչպես նաեւ 5101–ից 5105 ապրանքային դիրքերի բրդյա մանվածքները եւ կենդանիների բուրդը՝ նուրբ եւ կոպիտ, 5201–ից 5203 ապրանքային դիրքերի բամբակի մանրաթելերը եւ 5301 –ից 5305 ապրանքային դիրքերի բուսական մանրաթելերը:

5.3. «Մանածագործական մանրաթելերից թաղանթանյութ», «քիմիական նյութեր» եւ «թղթանյութեր» եզրույթները ցանկում օգտագործվում են նկարագրելու համար այն նյութերը, որոնք դասակարգված չեն 50–ից 63–րդ ապրանքախմբերի ներքո, եւ որոնք կարող են օգտագործվել արհեստական, սինթետիկ մանրաթելեր կամ թղթե մանվածք կամ այլ մանվածք արտադրելու համար:

5.4. «Քիմիական շտապելային մանրաթելեր» եզրույթը ցանկում օգտագործվում է՝ նշելու համար 5501–ից 5507 ապրանքային դիրքերի սինթետիկ կամ արհեստական թելից լարանը, շտապելային մանրաթելերը կամ թափոնը:

Ծանոթագրություն 6: Մանածագործական նյութերի խառնուրդից պատրաստված արտադրատեսակների համար կիրառելի՝ թույլատրելի շեղումները

6.1. Այն դեպքում, երբ ցանկում նշված կոնկրետ արտադրանքի համար հղում է կատարվում սույն ծանոթագրությանը, 3–րդ սյունակում նշված պայմանները չպետք է կիրառվեն այդ արտադրանքի արտադրության մեջ օգտագործված մանածագործական որեւէ հիմնական նյութի նկատմամբ, որը, ամբողջությամբ վերցված, կազմում է օգտագործված մանածագործական բոլոր հիմնական նյութերի ընդհանուր զանգվածի 10 %–ը կամ պակաս (տե՛ս նաեւ 6.3 եւ 6.4 ծանոթագրությունները):

6.2. Այնուամենայնիվ, 6.1 ծանոթագրության մեջ նշված թույլատրելի շեղումը կարող է կիրառվել միայն խառնուրդված արտադրատեսակների նկատմամբ, որոնք պատրաստվել են երկու կամ ավելի մանածագործական հիմնական նյութերից:

Մանածագործական հիմնական նյութերը հետեւյալներն են՝

մետաքս.

բուրդ.

կենդանիների կոպիտ բուրդ.

կենդանիների նուրբ բուրդ.

ձիու մազ.

բամբակ.

թղթանյութեր եւ թուղթ.

վուշ.

մաքուր կանեփաթել.

ջութե մանրաթելեր եւ այլ թելատուների մանածագործական մանրաթելեր.

սիզալի մանրաթելեր եւ Agave (ագավա) ցեղատեսակից ստացված մանածագործական այլ մանրաթելեր.

հինդկընկույզի, աբակայի, ռամիի մանրաթելեր եւ բուսական այլ մանածագործական մանրաթելեր.

սինթետիկ քիմիական թելեր.

արհեստական քիմիական թելեր.

հոսանքահաղորդ մետաղաթելեր.

բազմապրոպիլենային սինթետիկ քիմիական շտապելային մանրաթելեր.

բազմաեթերային սինթետիկ քիմիական շտապելային մանրաթելեր.

բազմամիդային սինթետիկ քիմիական շտապելային մանրաթելեր.

բազմակրիլանիտրիլային սինթետիկ քիմիական շտապելային մանրաթելեր.

բազմաիմիդային սինթետիկ քիմիական շտապելային մանրաթելեր.

բազմատետրաֆտորէթիլենային սինթետիկ քիմիական շտապելային մանրաթելեր.

բազմա (ֆենիլսուլֆիդային) սինթետիկ քիմիական շտապելային մանրաթելեր.

բազմա (քլորվինիլային) սինթետիկ քիմիական շտապելային մանրաթելեր.

այլ սինթետիկ քիմիական շտապելային մանրաթելեր.

վիսկոզային արհեստական քիմիական շտապելային մանրաթելեր.

այլ արհեստական քիմիական շտապելային մանրաթելեր.

բազմաեթերի փափուկ կտորներից հատվածակազմված պոլիուրեթանից պատրաստված մանվածք՝ երիզված կամ չերիզված.

պոլիեստերի փափուկ կտորներից հատվածակազմված պոլիուրեթանից պատրաստված մանվածք՝ երիզված կամ չերիզված.

ալյումինե փայլաթիթեղից կամ պոլիմերային թաղանթից միջուկով, ալյումինի փոշով պատված կամ չպատված, 5 մմ–ից ոչ ավելի լայնքով, պոլիմերային թաղանթի երկու շերտերի միջեւ թափանցիկ կամ գունավոր սոսնձով ամրացված ժապավեն պարունակող՝ 5605 ապրանքային դիրքի արտադրատեսակները (մետաղատոգորված մանվածք).

5605 ապրանքային դիրքի այլ արտադրատեսակներ.

ապակե մանրաթելեր.

մետաղյա մանրաթելեր:

Օրինակ՝

5205 ապրանքային դիրքի մանվածքը, որը պատրաստված է 5203 ապրանքային դիրքի բամբակի մանրաթելերից եւ 5506 ապրանքային դիրքի սինթետիկ շտապելային մանրաթելերից, խառնուրդված մանվածք է: Հետեւաբար ծագում չունեցող սինթետիկ շտապելային մանրաթելերը, որոնք չեն բավարարում ծագման կանոնները, կարող են օգտագործվել՝ պայմանով, որ դրանց ընդհանուր զանգվածը չի գերազանցում մանվածքի զանգվածի 10 %–ը:

Օրինակ՝

5112 ապրանքային դիրքի բրդե գործվածքը, որը պատրաստված է 5107 ապրանքային դիրքի բրդե մանվածքից եւ 5509 ապրանքային դիրքի շտապելային մանրաթելերից պատրաստված սինթետիկ մանվածքից,

խառնուրդված գործվածք է: Հետեւաբար սինթետիկ մանվածքը, որը չի բավարարում ծագման կանոնները, կամ բրդե մանվածքը, որը չի բավարարում ծագման կանոնները, կամ այդ երկուսի համադրությունը կարող է օգտագործվել՝ պայմանով, որ դրանց ընդհանուր զանգվածը չի գերազանցում գործվածքի զանգվածի 10%-ը:

Օրինակ՝

